ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 18.06/295
18.06.2015 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության
պետ Գորիկ Հակոբյանին

Հարգելի պարոն Հակոբյան,

2015թ. մայիսի 29-ին կազմակերպության կողմից տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացվել Ձեզ, որով խնդրել եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե «Հայկական վերածնունդ» կազմակերպության Փարիզի մասնաճյուղի համակարգող, Հիմնադիր խորհրդարանի պատգամավոր Շանթ Ոսկերիչյանի ՀՀ մուտքը արգելելու վերաբերյալ:

2015թ. հունիսի 10-ին ստացել եմ պատասխան գրություն, ըստ որի Ժան Բապտիստ Օզկիրիսյանին ՀՀ մուտք գործելն արգելվել է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը հետևյալն է՝ Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա տրամադրելը (ժամկետի երկարաձգման) մերժելը, մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչելը կամ մուտք գործելն արգելելն է: Նշված հոդվածը բաղկացած է 6 մասից և համապատասխան ենթակետեր:

ՀՀ Ազգային անվտանգության ծառայության վարչության պետի պատասխան գրության մեջ չի նշվել, թե կոնկրետ հոդվածի որ մասի, որ կետի պահանջներից ելնելով է Շանթ Ոսկերիչյանին (Ժան Բապտիստ Օզկիրիսյանին) արգելվել մուտք գործել ՀՀ տարածք:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին թե.

- *2015թ. մայիսի 21-ին, երեկոյան «Հայկական վերածնունդ» կազմակերպության Փարիզի մասնաճյուղի համակարգող, Հիմնադիր խորհրդարանի պատգամավոր Շանթ Ոսկերիչյանին (Ժան Բապտիստ Օզկիրիսյանին) «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կոնկրետ որ մասի պահանջներից ելնելով է արգելվել ՀՀ մուտք գործել:*

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am
հեռ.՝ 094042268